ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է **ՀՀ կառավարության մասնաշենքի (Կառավարական տուն 1) տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայության** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/11** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունվարի 13-ին կնքված **N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/11** գնման պայմանագրում 2023 թվականի սեպտեմբերի 8-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	Կազմակերպությանը համապատասխան տեղեկատվության տրամադրման երկարաձգելու վերաբերյալ կատարողի գրությունը և պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը:
Փոփոխության նկարագրություն	Օրացուցայի գրաֆիկի փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
13.01.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/11 գնման պայմանագրի

ք. Երևան 08.09.2023թ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Պեպանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **ՀՀ կառավարության մասնաշենքի (Կառավարական տուն 1) տեխնիկական վիճակի հետազոտության և անձնագրավորման ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 13.01.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 1 հավելվածում ծառայությունների մատուցման ժամկետին վերաբերող <<240>> թիվը փոխարինել <<270>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Ադոնցի փող.17/2 շենք, բն.45
կառավարական տուն 3	<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ Կենտրոնական մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1930054403110100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00142766
Հ/Հ 900011042166	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Պեպանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.